



Լիցենզիա	ԱՄ 102	audit	accounting	advisory	License	ԱՄ 102
Հասցե	Նալբանդյան 50/136, ք Երևան ՀՀ,			www.4aconsulting.am	Address	Nalbandyan 50/136, Yerevan, RA
Հեռախոս	+374(10) 52 08 47			info@4aconsulting.am	Telephone	+374(10) 52 08 47

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՌԱԳԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ -ի մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ռադիո 107 ՖՄ» ՍՊԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2017թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերը ճշմարիտ և իրական պատկերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Ձեր ուշադրությանն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին սեփական կապիտալին, որտեղ երևում է, որ Ընկերությունն ունի վնասներ: Ընկերության գուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ուստի ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներից Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել կանոնադրական կապիտալի նվազումը: Այս գործոնների առկայությունը կասկածներ են առաջացնում Ընկերության անընդհատ գործելու վերաբերյալ: Սակայն հաշվի առնելով Ընկերության գործունեության զարգացման ծրագիրը ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը կկարողանա ապահովել իր շարունակական գործունեությունը:

Մեր կարծիքը չի ձևափոխվում այս հարցի առնչությամբ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՖՀՄՄ-ների համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հնկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հնկերությունը լուծարելու կամ Հնկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հնկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:
- Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

23 մայիսի, 2018թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր



Աննա Ավետիսյան

Աուդիտի ղեկավար

Handwritten signature in blue ink.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

	Ծան ոք.	2017թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
<i>Ակտիվներ</i>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	121	203
Ոչ նյութական ակտիվներ		116	79
		<u>237</u>	<u>282</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	5	2,142	2,726
Շահութահարկի գծով կանխավճար		359	356
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	6	426	509
		<u>2,927</u>	<u>3,591</u>
Ընդամենը ակտիվներ		<u>3,164</u>	<u>3,873</u>
<i>Սեփական կապիտալ և պարտավորություններ</i>			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Կանոնադրական կապիտալ	7	35,050	35,050
Կուտակված վնաս		(107,899)	(107,939)
		<u>(72,849)</u>	<u>(72,889)</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Փոխառություններ	8	73,416	74,470
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	2,597	2,292
Կրեդիտորական պարտք շահութահարկի գծով		-	-
		<u>76,013</u>	<u>76,762</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>3,164</u>	<u>3,873</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 23 մայիսի, 2018թ.

Անուշ Նիկողոսյան

Տնօրեն ժ/պ

Գլխավոր հաշվապահ



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանուցազրույթումների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գովազդից հասույթ	5,400	7,761
Եկամուտներ ձայնագրումից	7,656	6,696
Այլ եկամուտ	1,845	-
	<u>14,901</u>	<u>14,457</u>
Աշխատավարձի գծով ծախսեր	(7,733)	(8,396)
Հաղորդումների ծախսեր	(3,140)	(3,116)
Մարկետինգի և գովազդի ծախսեր	(814)	(834)
Հեռահաղորդակցության ծախսեր	(694)	(701)
Վարձակալական ծախսեր	(1,500)	(1,500)
Մաշվածության և սպասարկման ծախսեր	(105)	(467)
Այլ ծախսեր	(864)	(453)
Գործառնական գործունեությունից շահույթ/վնաս	<u>51</u>	<u>(1,010)</u>
Այլ ֆինանսական հոդվածներ	-	-
Շահույթ/վնասը մինչև հարկերը	<u>51</u>	<u>(1,010)</u>
Շահութահարկի գծով ծախս	10 (11)	(19)
Զուտ շահույթ/վնաս	<u>40</u>	<u>(1,029)</u>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	<u>40</u>	<u>(1,029)</u>

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: